



DOI: 10.59560/18291155-2025.4-317

ՀԱԿՈՐ ԿՈՒՐԵՂՅԱՆ

«ՋԵՅ-ՓԻ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՍՊԸ իրավաբան,
Հայաստանում ֆրանսիական համալսարանի շրջանավարտ,
Հայաստանի ամերիկյան համալսարանի իրավագիտության մագիստրատուրայի ուսանող,
ՀՀ Փաստաբանական ակադեմիայի ունկնդիր

ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ՄԵՂԱԴՐՅԱԼԻՆ ՁԵՐԲԱԿԱԼԵԼՈՒ ԻՐԱՎԱԶԱՓՈՒԹՅՈՒՆԸ ՏՆԱՅԻՆ ԿԱԼԱՆՔ ԿԱՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Ամփոփագիր

Հոդվածի շրջանակներում քննարկման առարկա է դարձվում ազատության մեջ գտնվող մեղադրյալին ձերբակալելու իրավաչափությունն այն դեպքում, երբ քննիչի գնահատմամբ առկա է մեղադրյալի նկատմամբ ոչ թե կալանքի, այլ տնային կալանքի կամ վարչական հսկողության կիրառման անհրաժեշտություն:

Վերլուծվում են հարցի վերաբերյալ իրավունքի դոկտրինում և իրավակիրառ պրակտիկայում արտահայտված հակադիր կարծիքները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 111-րդ հոդվածի մեկնաբանման նպատակով կիրառելով նորմի մեկնաբանման մի շարք տեսակներ և եղանակներ, ինչպես նաև հիմք ընդունելով հիմնական իրավունքների սահմանափակման համաչափության սկզբունք-երաշխիքը, ազատության կանխավարկածը՝ հեղինակը գալիս է այն եզրահանգման, որ քննարկվող հիմքով անձին ձերբակալելու հնարավորությունն այն դեպքում, երբ կալանքի կիրառման անհրաժեշտությունը բացակայում է, չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումներից, ինչպես նաև հակասում է իրավունքների սահմանափակման նշված սկզբունք-երաշխիքների պահանջներին:

Հոդվածը կարևոր նշանակություն ունի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 111-րդ հոդվածի իմաստի բացահայտման, օրենքի միատեսակ կիրառության ապահովման և անձանց իրավունքների անհարկի սահմանափակման բացառման տեսանկյունից:

Հիմնաբառեր. ձերբակալում, նորմի մեկնաբանում, համաչափության սկզբունք, ազատության կանխավարկած:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴՍՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՒ 4(121)2025

Նախաբան

Այն, որ իրավագիտությունը ճշգրիտ գիտություն չէ, և որ միևնույն իրավական նորմը կարող է մի քանի անձանց կողմից ընկալվել և մեկնաբանվել իրարից էապես տարբերվող կերպով, վաղուց հաստատված և ընդունված փաստ է:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով (հատկապես քրեական արդարադատության ոլորտում) իրավական նորմին տրված այս կամ այն մեկնաբանության արդյունքում անձի իրավունքների հնարավոր ոչ իրավաչափ սահմանափակումները, ինչպես նաև նպատակ հետապնդելով ապահովելու նորմի միատեսակ ընկալումը և կիրառումը, անհրաժեշտություն է առաջանում դոկտրինալ մակարդակում վեր հանելու տարընթերցումները և բացառելու իրավունքների անհարկի սահմանափակման հնարավոր դեպքերը:

Սույն հոդվածի առարկան վերաբերում է հենց նմանատիպ տարընթերցման և իրավունքների անհարկի սահմանափակման դեպքերից մեկին: Մասնավորապես, ինչպես դոկտրինում, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայում առկա են միմյանց հակասող մոտեցումներ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք) նախատեսված ձերբակալման հիմքերից մեկի՝ ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու համար անձին ձերբակալելու իրավաչափության վերաբերյալ:

Հեղինակների մի մասը գտնում է, որ ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու հիմքով ձերբակալվել կարող է նաև այն անձը, ում նկատմամբ քննիչը դատարան ներկայացնելու է տնային կալանքը կամ վարչական հսկողությունը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություն¹:

Հեղինակների մյուս մասի կարծիքով՝ քննարկվող հիմքով անձին ձերբակալելու միակ նպատակը մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելն է²:

Սույն հոդվածի հեղինակին գործնականում հանդիպել է դեպք, երբ անձին քննարկվող հիմքով ձերբակալելուց հետո քննիչը դատարան է ներկայացրել վարչական հսկողություն խափանման միջոցը կիրառելու վերաբերյալ միջնորդություն, դատարանն էլ, իր հերթին, միջնորդության քննության շրջանակներում անդրադառնալով ձերբակալման իրավաչափության հարցին, արձանագրել է դրա իրավաչափ լինելը:

Համաձայն չլինելով հեղինակների առաջին խմբի և դատական պրակտիկայում դատավորի հայտնած կարծիքի հետ՝ սույն աշխատության շրջանակներում քննարկման առարկա կդարձվի ազատության մեջ գտնվող մեղադրյալին

¹ **Նիկողոսյան Ա.Ս.** (Ղուկասյան Հ.Հ.-ի և Մաքբրայդ Զ.-ի աջակցությամբ), *Այլընտրանքային խափանման միջոցների կիրառման գործնական հիմնախնդիրների վերաբերյալ ուղեցույց: Երևան, 2024, էջեր 7-8, 38-39:*

² **Ղուկասյան Հ.Հ., Մելքոնյան Գ.Մ., Նիկողոսյան Ա.Ս.,** *Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց: Եվրոպայի խորհուրդ, հուլիս, 2022 թ., էջ 189:*

ՍԱԿՄԱՆԱԿՐՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ ◆ 4(121)2025 ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ

դատարան ներկայացնելու հիմքով ձերբակալելու իրավաչափությունն այն դեպքերում, երբ քննիչի գնահատմամբ առկա է տնային կալանք կամ վարչական հսկողություն կիրառելու անհրաժեշտություն և վերջինս պատրաստվում է դատարան ներկայացնել հենց նշված խափանման միջոցներից մեկը կիրառելու միջնորդություն:

1) Նորմի իմաստի բացահայտում

Օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ազատության մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ *կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու անհրաժեշտության դեպքում* քննիչն իրավասու է որոշում կայացնելու մեղադրյալին ձերբակալելու մասին:

Նորմի տառացի մեկնաբանման կանոնների կիրառման դեպքում արդեն իսկ հնարավոր է բացառել կալանքից տարբերվող, մեկ այլ խափանման միջոցի կիրառման անհրաժեշտությամբ պայմանավորված անձին նշված հիմքով ձերբակալելու հնարավորությունը: Նորմի տառացի տեքստից հստակ բխում է, որ քննարկվող հիմքով անձին ձերբակալել հնարավոր է բացառապես այն դեպքում, երբ առկա է վերջինիս նկատմամբ *կալանավորումը* որպես խափանման միջոց ընտրելու անհրաժեշտություն:

Հատկանշական է, որ ՀՀ նախկին քրեական դատավարության օրենսգրքի (սույն հոդվածի շրջանակներում նշված վկայակոչումը վերաբերում է 01.07.2022 թվականին ուժը կորցրած օրենսգրքին) 130-րդ հոդվածի 2-րդ մասն էքսպլիցիտ (ուղղակիորեն) սահմանում էր, որ մեղադրյալին քննարկվող հիմքով կարելի է ձերբակալել միայն այն դեպքում, երբ օրենսգրքի դրույթները թույլ են տալիս նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառել կալանավորումը: Հետաքրքիր է նաև, որ ՀՀ նախկին քրեական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի փոփոխությունը, այդ թվում՝ 2-րդ մասի նշված կարգավորման ավելացումը, տեղի են ունեցել 30.06.2021 թվականի թիվ ՀՕ-280-Ն փոփոխության շրջանակներում՝ այն նույն օրը, երբ ընդունվել է նոր Օրենսգիրքը: Նշվածն էական նշանակություն ունի օրենսդրի կամքի բացահայտման տեսանկյունից, քանզի նոր Օրենսգիրքն ընդունելով և դրա 111-րդ հոդվածում ձերբակալման քննարկվող հիմքը նախատեսելով՝ օրենսդիրը նախքան նոր Օրենսգրքի ուժի մեջ մտնելը տվյալ պահին գործող օրենսգրքում ևս նախատեսել է ձերբակալման քննարկվող հիմքը՝ ուղղակիորեն նշելով, որ այն կարող է կիրառվել բացառապես անձի նկատմամբ կալանքի կիրառման հիմքերի առկայության դեպքում:

Ուստի գտնում ենք, որ նորմի տառացի տեքստը տարակուսանք չի առաջացնում դրա բովանդակության վերաբերյալ: Անգամ եթե քննարկվող նորմի տեքստն առաջացնեք որևէ անորոշություն, «in dubio mitius» մաքսիմի կիրառմամբ նման անորոշությունները կմեկնաբանվեն անձի օգտին¹ կրկին բացառելով

¹ *Ղամբարյան Ա.Ս., Մուրադյան Մ.Հ., Մկրտչյան Մ., Կասկածի դեպքում մեղմ որոշման օգտին (in dubio mitius)՝ մաքսիմի կիրառությունն իրավական անորոշությունները լուծելիս: ՀՀ սահմանադրական դատարան. Տեղեկագիր, 3 (111) 2023, Երևան, էջեր 12-14:*

կալանավորումն ընտրելու անհրաժեշտությունից զատ այլ դեպքերում ձերբակալման քննարկվող հիմքի կիրառումը:

Նորմի մեկնաբանման համակարգային եղանակի կիրառման շրջանակներում նախ անդրադառնանք այն հարցին, թե որ դեպքերում է առկա «կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու անհրաժեշտություն»: Օրենսգրքի 118-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով, կալանքի կիրառման անհրաժեշտությունն առկա է միայն այն դեպքում, երբ այլընտրանքային խափանման միջոցների կիրառումն անբավարար է մեղադրյալի փախուստը կամ վերջինիս կողմից հանցանք կատարելը կանխելու կամ նրա կողմից իր վրա Օրենսգրքով կամ դատարանի որոշմամբ դրված պարտականությունների կատարումն ապահովելու համար:

Այսինքն, Օրենսգրքն անձին նշված հիմքով ձերբակալելու նախապայման է համարում քննիչի մոտ որոշակի փաստերի, տեղեկությունների, ապացույցների հիման վրա ի սկզբանե այն համոզմունքի ձևավորումը, որ առկա է մեղադրյալի հնարավոր ոչ իրավաչափ վարքագծի (փախուստի, հանցանք կատարելու, պարտականությունները չկատարելու) բարձր ռիսկ, և որ այլընտրանքային խափանման միջոցների կիրառումը տվյալ անձի նկատմամբ բավարար չէ վերջինիս օրինական վարքագիծն ապահովելու համար: Եթե քննիչն ի սկզբանե գտնում է, որ նշված ռիսկերը խիստ բարձր չեն և անձի օրինական վարքագծի ապահովումը հնարավոր է նաև այլընտրանքային խափանման միջոցի կիրառմամբ և պատրաստվում է հենց նման միջնորդություն ներկայացնել դատարան, ապա քննարկվող հիմքով անձին ձերբակալելու հնարավորությունը բացակայում է:

Հակառակ մոտեցում ունեցող հեղինակների կարծիքով՝ քննարկվող հիմքով անձին ձերբակալելու իրավական հիմք են հանդիսանում Օրենսգրքի 123-րդ և 124-րդ հոդվածների կարգավորումներն առ այն, որ տնային կալանքի/վարչական հսկողության կիրառման կարգի վրա տարածվում են կալանքի համար Օրենսգրքով սահմանված դրույթները: Ավելին, նրանք գտնում են, որ դատարանի կողմից կիրառվող խափանման միջոցների ընտրության համար դատարան կարող է ներկայացվել միայն ձերբակալված մեղադրյալը, ինչը բխում է Օրենսգրքի 285-րդ հոդվածի 5-րդ մասից¹:

Համաձայն չենք նշված մեկնաբանությունների հետ ինչպես նախորդիվ ներկայացված, այնպես էլ հետևյալ հիմնավորմամբ.

Նախ, այն փաստը, որ տնային կալանքի/վարչական հսկողության կիրառման կարգի վրա տարածվում են կալանքի համար Օրենսգրքով սահմանված դրույթները, չի նշանակում, որ նույնը վերաբերում է ձերբակալման կարգի կիրառմանը: Ձերբակալումը և կալանքը հանդիսանում են Օրենսգրքով նախատեսված հարկադրանքի միջոցներ, սակայն ձերբակալումն Օրենսգրքով նախատեսված, կալանքից և այլ խափանման միջոցներից անջատ, ինքնուրույն

¹ **Նիկողոսյան Ա.Ս.** (Ղուկասյան Հ. Հ.-ի և Մաքբրայդ Ջ.-ի աջակցությամբ), *Այլընտրանքային խափանման միջոցների կիրառման գործնական հիմնախնդիրների վերաբերյալ ուղեցույց: Երևան, 2024, էջեր 7-8, 38-39:*

ինստիտուտ է: Ձերբակալման կիրառման կարգը, հիմքերը, ժամկետները, ձերբակալվածին ազատելու հիմքերը սահմանված են Օրենսգրքի 13-րդ գլխում, մինչդեռ կալանքին վերաբերելի կարգավորումները, այդ թվում՝ կիրառման կարգը, հիմքերը, ժամկետները և այլն սահմանվում են Օրենսգրքի 14-րդ գլխում:

Ձերբակալման և կալանավորման տարբերություններին նախկինում անդրադարձ կատարվել է ինչպես դոկտրինալ մակարդակում¹, այնպես էլ ՀՀ Սահմանադրական դատարանի որոշմամբ: Այսպես, ՍԴՈ-827² որոշման շրջանակներում Սահմանադրական դատարանը նշել է. «*«Ձերբակալում» և «կալանավորում» ինստիտուտների՝ օրենսդրությամբ սահմանված նպատակների և հիմքերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրահանգել, որ այդ ինստիտուտներն ունեն ինքնուրույն բովանդակություն, հետապնդում են միմյանցից ըստ էության փարբերվող նպատակներ, ունեն կիրառման միմյանցից էապես փարբերվող հիմքեր: Դրանցից յուրաքանչյուրն օրենսդիրն ընտրել է որպես ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 1-ին մասում մատնանշված առանձին նպատակներին հասնելու ինքնուրույն դատավարական միջոց, և կիրառվում է փարբեր հիմքերի առկայությամբ: Հետևաբար, դրանցից յուրաքանչյուրը, առանց որևէ փոխադասմանավորվածության, փոխկապակցվածության և հաջորդականության, ինքնուրույնաբար կարող է կիրառվել, երբ առկա են դրանով հետապնդվող նպատակները և դրա կիրառման համար անհրաժեշտ հիմքերը»:*

Ուստի, կալանքի և տնային կալանքի/վարչական հսկողության կիրառման կարգերի նույնացումը չի նշանակում նաև ձերբակալման միևնույն հիմքի կիրառման հնարավորություն նշված խափանման միջոցների կիրառման անհրաժեշտության դեպքում:

Անդրադառնալով այն պնդմանը, որ դատարանի կողմից կիրառվող խափանման միջոցների ընտրության համար դատարան կարող է ներկայացվել միայն ձերբակալված մեղադրյալը, գտնում ենք, որ նշվածը որևէ կերպ չի բխում Օրենսգրքի կարգավորումներից, այդ թվում՝ Օրենսգրքի 285-րդ հոդվածի 5-րդ մասից: Օրենսգրքի 285-րդ հոդվածի 5-րդ մասով ամրագրված պահանջն առ այն, որ ձերբակալված մեղադրյալը միջնորդությունը ներկայացնելու հետ միաժամանակ պետք է դատարան բերվի, բացառապես վերաբերում է դեռևս դարեր առաջ (12-13-րդ դարեր) ընդհանուր իրավունքի երկրներում (մասնավորապես՝ Անգլիա) ի հայտ եկած Habeas Corpus երաշխիքի իրացման ապահովմանը: Հիշեցնենք, որ նշվածը վերաբերում է ազատությունից զրկված անձի՝ դատարանի առջև կանգնելու, իր ազատության սահմանափակման իրավաչափությունը դատարանի կողմից ստուգման ենթարկվելու իրավունքներին: Ձերբակալման դեպքում ևս սահմանափակվում է անձի ազատությունը, ուստի վերջինս իրավունք ունի այդ սահմանափակման իրավաչափության ստուգման նպատակով հնարավոր ամենասեղմ ժամկետներում դատարանի առջև

¹ **Ղամբարյան Ա.Ս.**, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Մաս 1, Հեղ. խումբ: Գիտ. խմբ. Ա. Ղամբարյան, Եր., Տիգրան Մեծ, 2016, էջեր 494-495:

² www.concourt.am/decision/decisions/633eb132829f2_sdv-827.pdf

կանգնելու: Հենց դրա համար է Օրենսգիրքը նախատեսել ձերբակալված մեղադրյալին վերջինիս նկատմամբ խափանման միջոցի կիրառման միջնորդությունը ներկայացնելու հետ միաժամանակ դատարան բերելու պահանջը:

Դեռ ավելին, դատարանի կողմից կիրառվող խափանման միջոցի հարցի քննարկման համար անձի՝ անպայմանորեն ձերբակալված լինելու անհրաժեշտության վերաբերյալ պնդումը հերքվում է նաև Օրենսգրքի 285-րդ հոդվածի համակարգային մեկնաբանման արդյունքում: Այսպես, նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե մեղադրյալը, որի նկատմամբ հարուցվում է միջնորդությունը, *անազապության մեջ է*, ապա միջնորդությանը կցվում են նաև անձին ազատությունից զրկելու հիմք հանդիսացած փաստաթղթերի պատճենները: Նշվածից բխում է, որ մեղադրյալը, ում նկատմամբ խափանման միջոցի կիրառման միջնորդություն է հարուցվում, կարող է և միջնորդության հարուցման պահին անազատության մեջ (այդ թվում՝ ձերբակալված) չլինել:

Քննարկվող ձերբակալման հիմքը նախատեսող նորմի իմաստի բացահայտման վերաբերյալ անհրաժեշտ է կատարել ևս մեկ կարևոր նկատառում: Իրավունքի տեսությանը հայտնի է այն կանոնը, որ նորմի տարածական մեկնաբանում չի թույլատրվում իրավական սահմանափակումներ, իրավական պատասխանատվություն ենթադրող նորմերի մեկնաբանման համատեքստում¹: Նույնանման արգելք է նախատեսվում նաև օրենքի կամ իրավունքի անալոգիայի կիրառման դեպքում: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է օրենքի կամ իրավունքի անալոգիայի կիրառման արգելք, ի թիվս այլի, այն դեպքերում, երբ դրանով սահմանափակվում են անձանց իրավունքները, ազատությունները, կամ նրանց համար նախատեսվում է նոր պարտականություն կամ պատասխանատվություն: Ուստի, Օրենսգրքի 111-րդ հոդվածով նախատեսված ձերբակալման հիմքը չի կարող տարածական մեկնաբանման կամ օրենքի անալոգիայով կիրառման ենթարկվել՝ թույլ տալով կալանավորման անհրաժեշտության առկայությունից բացի այլ հիմքով ձերբակալման նշված տեսակի կիրառում:

Նորմի իմաստի բացահայտմանն ուղղված վերլուծության արդյունքում պետք է փաստել, որ Օրենսգրքի 111-րդ հոդվածով նախատեսված ձերբակալման հիմքն առավել քան հստակ է: Ավելին, ՀՀ վճռաբեկ դատարանը ևս, Դավիթ Խաչատրյանի վերաբերյալ 2024 թվականի մարտի 22-ի որոշմամբ, անդրադառնալով Օրենսգրքի 111-րդ հոդվածի կարգավորմանը, նշել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված կարգով ազատության մեջ գտնվող մեղադրյալի ձերբակալման

¹ Հեղ. խումբ: Պեղության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ / Գիտ. խմբ՝ Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան, 4-րդ լրամշակված հրատ, Եր., «Լուսաբաց հրատարակչություն», 2023, էջ 369:

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ ◆ 4(121)2025 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ

իրավաչափ նպատակը վերջինիս դատարան ներկայացնելն է՝ կալանավորման անհրաժեշտության հարցը քննարկելու համար:

Գտնում ենք, որ Օրենսգրքի 111-րդ հոդվածով սահմանված հիմքով անձին ձերբակալելով վերջինիս անձնական ազատության իրավունքի նկատմամբ միջամտությունը կարող է իրավաչափ համարվել բացառապես այն դեպքում, երբ հաջորդիվ քննարկման առարկա է դառնալու անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու հարցը, քննիչի կողմից դատարան ներկայացվելու է կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություն: Բոլոր այն դեպքերում, երբ քննիչը գտնում է, որ վերացել է նշված հիմքով ձերբակալված անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու անհրաժեշտությունը (նվազել են անձի հնարավոր ոչ իրավաչափ վարքագծի (փախուստի, հանցանք կատարելու, պարտականությունները չկատարելու) վերաբերյալ ռիսկերը), և անհրաժեշտ է կիրառել կալանքից տարբերվող մեկ այլ խափանման միջոց, ձերբակալված անձը պետք է անհապաղ ազատ արձակվի Օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով:

Միաժամանակ, կարևոր ենք համարում արձանագրել, որ պետք է հստակ իրարից տարբերել անձին քննարկվող հիմքով ձերբակալելուց հետո քննիչի կողմից ի սկզբանե այլընտրանքային խափանման միջոցի կիրառման միջնորդություն ներկայացնելու և քննիչի կողմից կալանքի միջնորդություն ներկայացվելու, այնուհետև դատարանի կողմից քննիչի միջնորդությունը մասնակի բավարարվելու և այլընտրանքային խափանման միջոց կիրառվելու դեպքերը: Երկրորդ դեպքում, երբ քննիչի մոտ ի սկզբանե առկա է եղել կալանքի կիրառման անհրաժեշտության վերաբերյալ համոզմունք, սակայն դատարանը կալանքի կիրառման միջնորդության քննության արդյունքում գտել է, որ անձի իրավաչափ վարքագիծը հնարավոր է ապահովել նաև այլընտրանքային խափանման միջոցի կիրառմամբ, Օրենսգրքի 111-րդ հոդվածի հիմքով ձերբակալումը, որպես կանոն, չպետք է ոչ իրավաչափ ճանաչվի: Նշվածի հետ մեկտեղ, բացառելու համար քննիչի կողմից անձին քննարկվող հիմքով ձերբակալելու և կալանքի կիրառման «ձևական» (ակնհայտ անհիմն) միջնորդություն դատարան ներկայացնելու հնարավոր ռիսկը, առաջարկվում է նման պայմաններում արձանագրելով քննիչի միջնորդության՝ ակնհայտ անհիմն լինելը, կիրառել Օրենսգրքի 288-րդ հոդվածի 7-րդ մասի կարգավորումը ձերբակալման ընթացքում ձերբակալված անձի իրավունքների խախտման արձանագրման վերաբերյալ:

Սույն աշխատության հաջորդ բաժնում կքննարկվեն Օրենսգրքով նախատեսված, ձերբակալումից ավելի մեղմ կառուցակարգերը, որոնցով հնարավոր է ապահովել անձի ներկայությունն իր նկատմամբ տնային կալանք/վարչական հսկողություն խափանման միջոցների կիրառման միջնորդության քննության դատական նիստին, և որոնց ընտրությունը բխում է համաչափության սահմանադրական, անձի ազատության և անձնական անձեռնմխելիության քրեադատավարական սկզբունքներից, ինչպես նաև ազատության կանխավարկածից:

2) Ազատության մեջ գտնվող մեղադրյալի ձերբակալման համաչափության խնդիրը

Անձի հիմնական իրավունքների սահմանափակումը պետք է համապատասխանի մի շարք չափանիշների: Նման չափանիշների շարքում կարևոր տեղ է զբաղեցնում նաև հիմնական իրավունքների սահմանափակման համաչափության սկզբունքը, որն ունի ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական ճանաչում:

Համաչափության սկզբունքը, ըստ ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներում տրված մեկնաբանությունների, ենթադրում է, որ հիմնական իրավունքի սահմանափակմանն ուղղված միջոցն, ի թիվս այլի, պետք է լինի պիտանի, անհրաժեշտ և համարժեք (տե՛ս 2020 թ. հունիսի 18-ի ՍԴՈ-1546 որոշումը¹):

Տվյալ դեպքում պետք է քննարկել՝ արդյո՞ք Օրենսգիրքը նախատեսում է տնային կալանք/վարչական հսկողություն խափանման միջոցների կիրառման միջնորդության քննությանը մեղադրյալի ներկայությունն ապահովող այլ պիտանի միջոցներ, որոնք ավելի համարժեք են անհրաժեշտ նպատակին հասնելու համար:

Միանշանակ՝ այո: Ի սկզբանե, տնային կալանք/վարչական հսկողություն խափանման միջոցների կիրառման միջնորդությամբ անցկացվող դատալուծման մեղադրյալի մասնակցությունն ապահովելուն ուղղված վարույթն իրականացնող մարմնի գործողությունը պետք է հանդիսանա դատական նիստի մասին մեղադրյալին ծանուցելը: Օրենսգիրքը ևս սահմանում է, որ վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է վարույթային գործողության և դատական նիստի մասին պատշաճ ծանուցել այն անձանց, որոնք դրանց մասնակցելու իրավունք կամ պարտականություն ունեն (տե՛ս 149-րդ հոդվածի 1-ին մասը): Պարզ չէ, թե ինչով է պայմանավորված կանխավարկածն առ այն, որ մեղադրյալը չի ներկայանա տնային կալանք/վարչական հսկողություն խափանման միջոցների կիրառման միջնորդության քննության դատական նիստին: Իրավակիրառ պրակտիկայում հայտնի են դեպքեր, երբ անձն ինքնական վարույթն իրականացնող մարմին է ներկայացել անգամ կալանքն իր նկատմամբ որպես խափանման միջոց կիրառելու միջնորդության քննությանն ընդառաջ (հիշատակման է արժանի, օրինակ, ՀՀ ԱԺ պատգամավոր Արթուր Սարգսյանի կողմից 08.07.2025 թվականին իր նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդության քննությանն ընդառաջ ինքնական ՀՀ քննչական կոմիտե ներկայանալու դեպքը):

Կալանքի կիրառման անհրաժեշտության դեպքում, երբ քննիչի գնահատմամբ այնքան բարձր են մեղադրյալի փախուստի, հանցանք կատարելու, իր վրա դրված պարտականությունները չկատարելու ռիսկերը, որ դրանք չեն կարող զսպվել այլընտրանքային խափանման միջոցի կիրառմամբ, միգուցե տրամաբանական է կալանքի կիրառման միջնորդության քննության դատական նիստի մասին մեղադրյալին նախապես (մինչև մեղադրյալի՝ վարույթն իրականացնող մարմնի հասանելիության տիրույթում հայտնվելը) չծանուցելը, քանզի եթե քննիչի կողմից

¹ www.concourt.am/decision/decisions/sdv-1546.pdf

արդեն իսկ որոշակի փաստական տվյալների հիման վրա նշված ռիսկերը բարձր են գնահատվել, ապա կալանքի կիրառման միջնորդության քննության դատական նիստի մասին նախապես ծանուցվելով՝ մեղադրյալը կարող է փաստացի դրսևորել ոչ իրավաչափ վարքագիծ և խոչընդոտել վարույթի բնականոն ընթացքը:

Հաշվի առնելով, որ տնային կալանք և, հատկապես, վարչական հսկողություն խափանման միջոցների կիրառման անհրաժեշտության հիմքում դրվում են մեղադրյալի հնարավոր ոչ իրավաչափ վարքագծի ավելի նվազ ռիսկեր¹, նշված խափանման միջոցների կիրառման միջնորդության քննությանն անձի ներկայությունը, կարծում ենք, հնարավոր է ապահովել նաև առանց անձին ի սկզբանե ձերբակալելու: Անձին դատարան ներկայացնելու նպատակով ինքնաշխատ եղանակով ձերբակալելն այն դեպքում, երբ ի սկզբանե բացակայում են վերջինիս հնարավոր ոչ իրավաչափ վարքագծի վերաբերյալ խիստ բարձր (կալանքի անհրաժեշտությանը բնորոշ) ռիսկերը, չի հանդիսանում անձնական ազատության իրավունքի համաչափ սահմանափակում: Պատահական չէ, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, ինչպես նաև ՀՀ Սահմանադրական դատարանը կայուն դատական պրակտիկա են ձևավորել առ այն, որ անկախ քրեական վարույթի փուլերից՝ ազատության մեջ մնալը կանոն է, իսկ ազատությունից զրկելը՝ բացառություն (ազատության կանխավարկած) (տե՛ս 2025 թ. հուլիսի 30-ի ՍԴԴ-1792 որոշումը²): Ազատությունը կանոն է, ազատությունից զրկելը՝ բացառություն, որի համար անհրաժեշտ է հիմնավորել ազատությունից զրկելուց զատ, այլ միջոցներով հանրային շահի պաշտպանության անհնարինությունը:

Եթե անգամ ազատության մեջ գտնվող մեղադրյալը չարամտորեն խուսափում է իր վրա Օրենսգրքով դրված պարտականությունը կատարելուց՝ դատական նիստին ներկայանալուց, վերջինիս ներկայությունը դատարանում կարող է ապահովվել վարույթն իրականացնող մարմին հարկադրաբար ներկայացնելու միջոցով: Վարույթն իրականացնող մարմին հարկադրաբար ներկայացնելու ևս, ինչպես և ձերբակալումը, հանդիսանում է հարկադրանքի միջոց, սակայն ի տարբերություն ձերբակալման, այն չի կարող տնել ավելի, քան այն պարտականության կատարումը, որի ապահովման նպատակով անձը հարկադրաբար ներկայացվել է (բոլոր դեպքերում ոչ ավելի, քան 12 ժամը):

Ստացվում է, որ ազատության մեջ գտնվող, տնային կալանքը/վարչական հսկողությունը կիրառելու միջնորդության քննությանը դատարանում մասնակցելուց խուսափող մեղադրյալի ներկայությունը դատարանում կարող է ապահովվել վարույթն իրականացնող մարմին հարկադրաբար ներկայացնելով,

¹ Մյուս կողմից, տնային կալանքի անհրաժեշտությունը կալանքի համեմատ նվազ, սակայն կրկին ոչ իրավաչափ վարքագծի բարձր ռիսկերով է պայմանավորվում, ուստի ինքնաշխատ ձերբակալման համաչափության խնդիրը տնային կալանքի դեպքում միզուցե նվազ ակնհայտ է վարչական հսկողության համեմատ, սակայն նշվածը չի չեզոքացնում սույն աշխատության առաջին բաժնում արված դպրոցությունները Օրենսգրքի 111-րդ հոդվածի մեկնաբանման վերաբերյալ:

² www.concourt.am/decision/decisions/6890a32e0aebb_SDV-1792.pdf

նույն արդյունավետությամբ, ինչ ձերբակալման դեպքում (միջոցի պիտանիություն), միաժամանակ Օրենսգրքի 111-րդ հոդվածի հիմքով ձերբակալման համեմատ անձնական ազատության իրավունքի նկատմամբ առավել մեղմ միջամտությամբ՝ հաշվի առնելով վարույթն իրականացնող մարմին հարկադրաբար ներկայացնելու նվազ տևողությունը ձերբակալման քննարկվող հիմքի համեմատ: Նշված մոտեցումը բխում է նաև անձի ազատության և անձնական անձեռնմխելիության քրեադատավարական սկզբունքից անմիջապես բխող նորմ-պահանջից՝ անձի նկատմամբ հարկադրանքի միջոց ընտրելիս նվազագույնի սկզբունքով առաջնորդվելու վերաբերյալ:

Մյուս կողմից, ազատության մեջ գտնվող մեղադրյալի կողմից տնային կալանքը/վարչական հսկողությունը կիրառելու միջնորդության քննությանը դատարանում մասնակցելուց չարամտորեն խուսափելն ինքնին կարող է դիտվել այնպիսի հանգամանք, որի ուժով քննիչը կարող է արձանագրել տնային կալանք/վարչական հսկողություն խափանման միջոցների կիրառմամբ Օրենսգրքով հետապնդվող նպատակներին (անձի իրավաչափ վարքագծի ապահովմանը) հասնելու անհնարինությունը, տնային կալանք/վարչական հսկողություն խափանման միջոցների անբավարարությունը, ինչն էլ հենց հիմք կհանդիսանա անձին Օրենսգրքի 111-րդ հոդվածով նախատեսված հիմքով ձերբակալելու և կալանքի կիրառման միջնորդություն դատարան ներկայացնելու համար:

Անդրադառնալով նաև համաչափության սկզբունքից բխող համարժեքության պահանջին՝ նշենք, որ անձի նկատմամբ տնային կալանքը/վարչական հսկողությունը կիրառելու հարցի քննարկման համար վերջինիս դատարան ներկայացնելու նպատակով ձերբակալելը չի համապատասխանում անձնական ազատության հիմնական իրավունքի նշանակությանը: Ազատության մեջ գտնվող մեղադրյալին կալանքի կիրառման հարցի քննարկման համար ձերբակալելու նպատակի իրավաչափությունը կայանում է նրանում, որ անձին համապատասխան հիմքերի առկայությամբ պայմանավորված ձերբակալելուց և նրա անձնական ազատության նկատմամբ ինտենսիվ միջամտությունից հետո քննարկվելու է նրա նկատմամբ անձնական ազատության առավել ինտենսիվ միջամտություն ենթադրող կալանքը որպես խափանման միջոց կիրառելու հարցը՝ պայմանավորված անձի հնարավոր ոչ իրավաչափ վարքագծի խիստ բարձր ռիսկերի առկայությամբ: Իրավաչափ չէ նման ռիսկերի բացակայության պայմաններում անձին ձերբակալելով նրա անձնական ազատության ինտենսիվ սահմանափակումը հետագայում նրա նկատմամբ անձնական ազատության ակնհայտ նվազ սահմանափակում ենթադրող տնային կալանք և հատկապես վարչական հսկողություն խափանման միջոցը կիրառելու հարցը քննարկելու նպատակով:

Ի վերջո, կարևոր է Բարձր դատարանի արձանագրումն առ այն, որ համարժեքությունը ենթադրում է սահմանափակվող իրավունքի և հանրային շահի միջև հավասարակշռության ապահովման պահանջ, որի համատեքստում Սահմանադրական դատարանն արձանագրել է. «(...) որևէ հիմնական իրավունքի կամ ազատությանը չմիջամտելը կամ այն երաշխավորելը, կախված դրանց էությունից, կանոն է, իսկ դրա սահմանափակումը՝ բացառություն, որը պետք է

ՍԱՀՄԱՆԱՐԴՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 4(121)2025

հիմնավորվի սահմանափակման յուրաքանչյուր դեպքում: Ընդամին, որքան ավելի ինտենսիվ է սահմանափակումը, այնքան ավելի է մեծանում սահմանափակումը հիմնավորելու բեռը: (...)» (տե՛ս 2020 թ. հունիսի 18-ի ՍԴՈ-1546 որոշումը¹):

Ամփոփում

Ամփոփելով սույն աշխատության շրջանակներում կատարված վերլուծության արդյունքները՝ գտնում ենք, որ ազատության մեջ գտնվող մեղադրյալը ձերբակալվել կարող է միայն վերջինիս նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու անհրաժեշտության դեպքում: Տնային կալանք կամ վարչական հսկողություն խափանման միջոցների կիրառման անհրաժեշտության դեպքում ազատության մեջ գտնվող մեղադրյալին ձերբակալելու հնարավորությունը չի բխում Օրենսգրքի կարգավորումներից, ինչպես նաև չի համապատասխանում հիմնական իրավունքների սահմանափակման համաչափության սկզբունքից բխող պահանջներին. անձի ինքնաշխատ ձերբակալումը տվյալ դեպքում հանդիսանում է ազատության կանխավարկածի խախտում:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի, դատական ակտերի և գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն, 22.12.2015 թ. ուժի մեջ մտած խմբագրությամբ:
2. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 01.07.1998 թ. ընդունված, 01.07.2022 թ. ուժը կորցրած:
3. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ընդունված՝ 30.06.2021 թ.:
4. Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենք, ընդունված՝ 21.03.2018 թ.:
5. ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 12 սեպտեմբերի 2009 թ. ՍԴՈ-827 որոշում:
6. ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 18 հունիսի 2020 թ. ՍԴՈ-1546 որոշում:
7. ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 30 հուլիսի 2025 թ. ՍԴՈ-1792 որոշում:
8. Դավիթ Խաչատրյանի վերաբերյալ թիվ ՀԿԴ/0054/06/23 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.03.2024 թ. որոշում:
9. **Նիկողոսյան Ա. ԺԱ.** (Ղուկասյան Հ.Հ.-ի և Մաքբրայդ Զ.-ի աջակցությամբ), Այլընտրանքային խափանման միջոցների կիրառման գործնական հիմնախնդիրների վերաբերյալ ուղեցույց: Երևան, 2024:
10. **Ղուկասյան Հ. ԺՀ., Մելքոնյան Դ. ԺԱ., Նիկողոսյան Ա. ԺԱ.,** Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց: Եվրոպայի խորհուրդ, հուլիս, 2022 թ.:

¹ www.concourt.am/decision/decisions/sdv-1546.pdf

11. Ղամբարյան Ա.Ս., Մուրադյան Մ.Հ., Մկրտչյան Մ., Կասկածի դեպքում մեղմ որոշման օգտին (in dubio mitius)՝ մաքսիմի կիրառությունն իրավական անորոշությունները լուծելիս: ՀՀ սահմանադրական դատարան. Տեղեկագիր, 3 (111) 2023, Երևան:

12. Ղամբարյան Ա.Ս., Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Մաս 1, Հեղ. խումբ: Գիտ. խմբ. Ա. Ղամբարյան, Եր., Տիգրան Մեծ, 2016:

13. Հեղ. խումբ, Պետության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ: Գիտ. խմբ՝ Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան, 4-րդ լրամշակված հրատ., Եր., «Լուսարաց հրատարակչատուն», 2023:

ЗАКОННОСТЬ ЗАДЕРЖАНИЯ ОБВИНЯЕМОГО, НАХОДЯЩЕГОСЯ НА СВОБОДЕ, В СЛУЧАЯХ НЕОБХОДИМОСТИ ПРИМЕНЕНИЯ ДОМАШНЕГО АРЕСТА ИЛИ ЗАПРЕТА ОПРЕДЕЛЕННЫХ ДЕЙСТВИЙ

Аннотация

В рамках настоящей статьи предметом обсуждения является законность задержания обвиняемого, находящегося на свободе, в случаях, когда по оценке следователя возникает необходимость не в применении заключения под стражу, а в назначении домашнего ареста либо запрета определенных действий.

В статье анализируются выраженные в юридической доктрине и судебной практике противоположные позиции по данному вопросу. С целью толкования статьи 111 Уголовно-процессуального кодекса Республики Армения автор использует различные методы и виды юридического толкования, опираясь при этом на принцип-гарантию соразмерности в ограничении основных прав и на презумпцию свободы. Автор приходит к выводу, что при отсутствии необходимости заключения под стражу возможность задержания лица на рассматриваемых основаниях не вытекает из положений Уголовно-процессуального кодекса Республики Армения и противоречит вышеуказанным принципам-гарантиям, связанным с ограничением прав.

Статья имеет особое значение для уточнения содержания статьи 111 Уголовно-процессуального кодекса Республики Армения, обеспечения единообразного применения закона и предотвращения необоснованных ограничений индивидуальных прав.

4(121)2025
◆ ՏԵԼԵՎԻԶՐ
◆ ՏԵԼԵՎԻԶՐ

Ключевые слова: задержание, юридическое толкование, принцип соразмерности, презумпция свободы.

THE LAWFULNESS OF ARRESTING AN ACCUSED AT LIBERTY IN CASES NECESSITATING THE APPLICATION OF HOME CONFINEMENT OR JUDICIAL SUPERVISION

Annotation

Within the framework of this article, the subject of discussion is the lawfulness of arresting an accused who is at liberty in cases where, in the investigator's assessment, the necessity arises not for the application of detention (custody), but rather for home confinement (house arrest) or judicial supervision (contrôle judiciaire).

The article analyzes the opposing views expressed in legal doctrine and judicial practice on this matter. For the purpose of interpreting Article 111 of the Criminal Procedure Code of the Republic of Armenia, the author applies various methods and types of legal interpretation, while also relying on the principle-guarantee of proportionality in restricting fundamental rights and on the presumption of liberty. The author concludes that the possibility of arresting a person on the basis under discussion, where the necessity for detention is absent, does not derive from the provisions of the Criminal Procedure Code of the Republic of Armenia and is incompatible with the aforementioned principle-guarantees relating to the restriction of rights.

The article is of particular significance for clarifying the meaning of Article 111 of the Criminal Procedure Code of the Republic of Armenia, ensuring uniform application of the law, and preventing unwarranted restrictions on individual rights.

Keywords: arrest, legal interpretation, principle of proportionality, presumption of liberty.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 30.09.2025 թ., պրվել է գրախոսության 05.10.2025 թ., ընդունվել է տպագրության 15.10.2025 թ.: